

Բրուցելյոզ

Քրոնիկ ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է, որը դրսևորվում է վիժումներով, ընկերքի պահումով, էնդոմետրիաներով և կենդանիների վերարտադրական կարողությունների խանգարումներով:

Հայտնի են բրուցելաների 6 տեսակ, որոնք բաժանվում են մի շարք կենսաբանական տարբերակների: Առկա են ոչխարների, այծերի, խոշոր եղջերավոր անասունների, յակերի, գոմեշների, ուղտերի, ձիերի, խոզերի, խոյերի, շների, առնետների, ինչպես նաև մարդկանց հարուցիչներ:

Հիվանդության հարուցիչը բազմաձև, 0.6-1.5 մկմ մեծության, անշարժ, աերոբ, Գրամբացասական մանրէ է: Որոշ շտամներ առաջացնում են պատիճ: Հատկապես լավ են աճում գլիցերինով և գլյուկոզայով լյարդային միջավայրում, պինդ սննդային միջավայրում տարբերում են S-տիպիկ, հարթ, R-անհարթ և M-լորձային գաղութներ: Արդեն բացահայտված է բրուցելաների L ձևը:

Կայունությունը

Բրուցելաների կայունությունը ցածր է ֆիզիկական և քիմիական գործոնների նկատմամբ: 60°C պայմաններում ոչնչանում են 30 րոպետում, 70°C-ում՝ 5-10 րոպետում, 90-100°C-ում՝ անմիջապես: Պանրի, յուղի, աղացած կաշվի մեջ մանրէները պահպանվում են 67 օր, աղացած մսի մեջ՝ մինչև 3 ամիս, սառեցրած մսի մեջ և բրդի վրա՝ մինչև 5 ամիս: Հողում, ջրում, գոմաղբում, կոշտ կերերի մեջ հարուցիչը կարող է իր կենսունակությունը պահպանել մինչև 4 ամիս, սակայն արևի ուղիղ ճառագայթները մանրէասպան են 3-4 ժամվա ընթացքում: Հարուցիչի մանրէները կրեոլինի, ֆենոլի, ֆորմալդեհիդի 1%-անոց լուծույթների ազդեցությունից ոչնչանում են 1 ժամում, իսկ 5%-անոց թարմ հանգած կրի լուծույթից՝ 2 ժամում:

Համաճարակաբանական տվյալները

Բրուցելյոզի նկատմամբ ընկալունակ են գյուղատնտեսական և ընտանի բոլոր կենդանիները, ինչպես նաև բրուցելաների առանձին տեսակներ փոխանցվում են մեկ կենդանական տեսակից մյուսին:

Բրուցելյոզի հարուցիչի հիմնական շտեմարանը գյուղատնտեսական կենդանիներն են, չնայած որ վայրի կենդանիները նույնպես կարող են մասնակցել համաճարակի ընթացքին: Վարակի համաճարակային օջախում բրուցելաները կարող են հայտնաբերվել նաև արյունածուծ օրգանիզմում և ձվի միջոցով փոխանցվել սերնդին:

Լաբորատոր կենդանիներից առավել ընկալունակ են ծովախոզուկները և լաբորատոր մկները:

Հիվանդության հարուցիչի աղբյուր են համարվում վարակի տարբեր ձևերով դրսևորվող կենդանիները՝ հիվանդները և շիճուկաբանական եղանակով դրականորեն հակազդող կենդանիները: Առավել մեծ վտանգ են ներկայացնում կլինիկական նշաններ ունեցող կենդանիները, մասնավորապես՝ բրուցելյոզի պատճառով վիժածները, որոնք սեռական ուղիներից մեծ քանակությամբ մանրէական զանգված են արտազատում արտաքին միջավայր: Հիվանդության հարուցիչն արտազատվում է նաև կաթի, սերմնաբջիջների, կղկղանքի, մեզի միջոցով:

Կովերի կաթնագեղձերում բրուցելաները կարող են պահպանել մինչև 7-9 տարի, ոչխարների մոտ՝ 2-3 տարի:

Համաճարակային գործընթացի անընդհատությունն ապահովվում է ոչ միայն հիվանդության հարուցիչի աղբյուրով, այլ նաև ի շնորհիվ բրուցելայով վարակված կենդանական ծագման մթերքի, հումքի, խնամքի առարկաների, անասնակերի, ջրի, ցամքարի և մանրէների հետ շփում ունեցած բոլոր առարկաների:

Կենդանիների վարակումն իրականացվում է ներքին ճանապարհով, սեռական ուղիներով, ամբողջականությունը խախտված մաշկի միջոցով: Մատղաշ կենդանիները սովորաբար վարակվում են կերի և ջրի միջոցով, իսկ հասակավորները՝ նաև սեռական ուղիներով, լորձաթաղանթով և մաշկի միջոցով: Հնարավոր է նաև վարակում շնչառական ուղիներով:

Վարակի տարածման տեսանկյունից մեծ վտանգ են ներկայացնում կենդանիների չվերահսկվող տեղափոխումները, հիվանդ և առողջ կենդանիների համատեղ պահվածքը, կարանտինային կանոնների խախտումը: Հիվանդության հարուցիչը կարող է տնտեսություն ներթափանցել շների, կրծողների, առնետների միջոցով, հատկապես՝ վարակակիր մատղաշների, որոնց մոտ բացակայում են կլինիկական նշանները:

Ախտածնությունը

Տարբեր ուղիներով վարակվելուց հետո բրուցելաներն ավշային ուղիներով տեղափոխվում են դեպի վարակման դարբասակից, այնուհետև՝ մյուս ավշային հանգույցները և ներքին պարենքիմատոզ օրգանները: Հակածնի նկատմամբ օրգանիզմի հակազդումը և ախտածնային փոփոխություններն ընթանում են օրինաչափորեն միմյանց հաջորդող երեք փուլերով.

1. Առաջնային լատենցիա՝ գաղտնի շրջան,

2. Տարածված վարակ,

3. Երկրորդային լատենցիա՝ գաղտնի վարակ:

Ընթացքը և նշանները

Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 15-30 օր, որը կախված է վարակման բաժնեչափից, կենդանիների հասակից, ֆիզիոլոգիական վիճակից: Եթե վարակի համաճարակային օջախում չկան հղի կենդանիներ, ապա հիվանդությունը չի դրսևորվում կլինիկական նշաններով: Վարակվածությունը կարելի է բացահայտել միայն ախտորոշման շիճուկաբանական և ալերգիական մեթոդներով: Հիվանդության արդյունքում կովերը վիժում են հղիության երկրորդ շրջանում, հաճախ՝ 5-8 ամսականում, ոչխարները և այծերը՝ 3-5 ամսվա հղիության շրջանում, խոզերը՝ տարբեր շրջաններում, շները՝ 40-50-րդ օրը: Եթե կենդանիները վարակվել են նախքան հղիացումը, ապա վիժումներ հազվագյուտ են լինում: Վիժումից հետո մյուս կլինիկական նշաններն ընկերքի պահումն է և շճաթարախային, իսկ հետագայում՝ թարախաֆիբրինոգային էնդոմետրիտի առաջացումը: Արգանդի լորձաթաղանթի բորբոքումը հաճախ ուղեկցվում է կաթնագեղձի բորբոքումներով, ձվարանների և ձվափողերի ախտահարումներով: Այս ամենից երբեմն խանգարվում է օրգանիզմի վերարտադրողական ֆունկցիան, որը հանգեցնում է անպտղության:

Շներն ու կատուները բրուցելյոզով վարակվում են վիժված պտուղը և պտղաթաղանթը, հիվանդների կաթը ուտելու դեպքում:

Թռչունները կայուն են բրուցելյոզի նկատմամբ և 1-2 ամսում առողջանում են:

Ախտաբանաանատոմիական փոփոխություններ

Չնայած բրուցելյոզի դեպքում գրեթե բոլոր օրգան-համակարգերն ընդգրկվում են ախտաբանության մեջ, սակայն միշտ չէ, որ նրանք բավարարում են ախտորոշման համար: Երբեմն ախտահարվում են երիկամները, փայծաղը, լյարդը, կաթնագեղձը, հոդերը: Նկատելի են պտղի ենթամաշկային բջջանքի այտուցը, որովայնի և կրծի խոռոչներում կարմրադարչնագույն հեղուկի կուտակումներ, շճային և լորձային թաղանթների արյունագեղումներ, ստամոքսաղիքային ուղիների լորձաթաղանթների և թոքերի կատառային բորբոքում, լյարդի մեռուկային օջախներ:

Ախտորոշումը

Առավել արդյունավետ է ախտորոշման համալիր մեթոդը, որի դեպքում հաշվի են առնվում համաճարակաբանական տվյալները, կլինիկական պատկերը, ալերգիական, մանրէաբանական, շիճուկաբանական և կենսաբանական հետազոտության արդյունքները:

Բուժումը

Բրուցելյոզով հիվանդ կենդանիներին չեն բուժում, ենթարկում են սպանդի:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները

Կենդանիների բրուցելյոզի պայքարի միջոցառումներին են վերաբերում՝

- ա) տնտեսությունների, բնակավայրերի պահպանումը բրուցելյոզի վարակից,
- բ) բրուցելյոզի նկատմամբ անապահով տնտեսությունների և բնակավայրերի առողջացումը,
- գ) մարդկանց պաշտպանումը բրուցելյոզով վարակվելուց:

Բրուցելյոզի նկատմամբ տնտեսությունների ապահովության պահպանության համար յուրաքանչյուր ներմուծվող կենդանի պետք է 30 օր պահվի կանխարգելիչ կարանտինի պայմաններում, շիճուկաբանական ստուգումներով բացահայտվի կենդանու առողջական վիճակը: Պետք է ապահով տնտեսություններում ֆերմաներում հիվանդությունը ժամանակին հայտնաբերելու նպատակով ծրագրված կերպով կատարել կենդանիների համակարգված ամենամյա զանգվածային ախտորոշիչ հետազոտություններ:

Վարակի կանխարգելման համալիր միջոցառումներում կարելի է օգտագործել նաև հակաբրուցելոզային վակցինա:

Կենդանիների մոտ բրուցելյոզ ախտորոշելու դեպքում տնտեսությունում մտցվում են վարակի տարածումը կանխող սահմանափակումներ և կազմում հիվանդության վերացման միջոցառումների պլան:

Հումքի օգտագործումը

Բոլոր տեսակի կենդանիների սպանդից ստացված միսը, որոնք ունեցել են բրուցելյոզի կլինիկական կամ ախտաբանաանատոմիական նշաններ, բաց են թողնում եփելուց հետո:

Բրուցելյոզի նկատմամբ հակազդած խոշոր եղջերավոր կենդանիների և խոզերի սպանդից ստացված միսը, բրուցելյոզի կլինիկական նշանների կամ մտում և օրգաններում ախտաբանաանատոմիական փոփոխությունների բացակայության դեպքում բաց են թողնվում առանց սահմանափակման:

Բրուցելյոզի նկատմամբ հակազդած ոչխարների և այծերի սպանդից ստացված միսը ենթակա է երշիկեղենի կամ պահածոների վերամշակման՝ պահպանելով համապատասխան պահանջները: